Միսաք Մեծարենց

Վայրկյաններ

Ո՛վ սիրական խավարներ: Կենդանի՛ երազ

դանդաղ գիշերներու, ուր կի՛րքը միայն նայվածքներ
ունի: Ու մի՛՛շտ, մի՛շտ, անխոնջ կերպով, անպատում
մելամաղձությունը համբույրին:

Ռեյմոն Պույեեռ

Հըրայրքի մեջ գիշերը զայն կ’երազեմ,
շրթունքներըս պատրաստ իր մեղկ համբույրին.
բայց ժըխորին մեջ կը մոռնամ վերստին
այն պահերն՝ ուր զայն սիրած եմ մոլեգին:

Ու կը մոռնամ ես նոպաներն ալ բոլոր.
հորդ կիրքերու ժամերն ամեն ըղձածոր՝
երբ կ’իյնամ ոտքն իր տեսիլքին՝ մինչև որ
անշարժանամ պաղատանքիս մեջ մոլոր:

Ու չեմ հիշեր ցորեկն ասոնք, երբ խունկե
ա՛լ ավելի հեշտ բուրմունք մը մեղկօրոր
իր ծըփանքին մեջ հույզերըս կը լլկե:

Այդ բուրումի եղկությունն, որ միշտ անկե

կը ծորի և կը պարուրե զիս՝ բոլոր
հոգիդ անծիր մոգությամբ մը կը խնկե: